ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ (1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

ՊՈՂՈՍ ԹՅՈՒԹՅՈՒՆՃՅԱՆ (Լիբանան)

Ինչպես Մերձավոր արևելքի մյուս երկրներու, այնպես ալ Լիբանանի մեջ բանվորական ու կոմունիստական շարժումը ծառացավ ու զարդացավ 1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանի մեջ հաղթանակած սոցիալիստական հեղափոխության հռչակած ազատագրական վեհ գաղափարներու ազդեցության տակ։ Հոկտեմբերի հաղթանակը, ինչպես կակնկալվեր, արթնցուց և նոր մակարդակի մղեց գաղութային ժողովուրդներու պայքարը՝ իմպերիալիզմի ճնշումեն ազատագրվելու համար։ 1919 թ. Վ. Ի. Լենինը արդեն գրած է. «Արևելքի ժողովուրդների ազատագրությունը գործնականորեն այժմ լիովին իրագործելի է»[1]։

«Ձեր երկրում կոմունիստական կուսակցության առաջացումը,— ասված է Լիբանանի կոմունիստական կուսակցության կազմավորման 60-ամյակի առթիվ ՍՄԿԿ Կենտկոմի ողջույնի ուղերձում,— անխզելիորեն կապված է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության գաղափարներու ազդեցությամբ տեղի ունեցած արաբական ազգային-ազատագրական շարժման վերելքին հետ։ Պաշտպանելով բանվոր դասակարգի, աշխատավոր լայն զանգվածներու շահերը, իր երկրի արմատական ազգային շահերը, կոմկուսը կարևոր ավանդ է ներդրել Լիբանանի ազատագրության և անկախության համար գաղութային լծի դեմ, ֆաշիստական սպառնալիքի դեմ լիբանանյան ժողովրդի մղած պայքարին մեջ»[2]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության անմիջական ազդեցության ներքո է, որ թափ առավ ազգային-ազատագրական պայքարներու շարք մը, ինչպես ասիական երկիրներու, նույնպես ալ Արաբական արևելքի մեջ։ Զարթոնքի այս շարժման մասը կկազմեն 1919-ի եգիպտական ըմբոստությունը բրիտանական տիրապետության դեմ, 1920-ի իրաքյան հեղափոխությունը բրիտանական նորահաստատ մանտայի դեմ և 1925-ի սուրիական հեղափոխությունը Ճեպել-Տրուզի ֆրանսական տիրապետության դեմ[3]։

Սովետական երիտասարդ պետության կողմե ցարական Ռուսիո նախկին գաղութներուն, ժողովուրդներուն և ազգային փոքրամասնությանց ազատության և ազգային ինքնորոշման կարելիություն ընծայելու գծով եղած միջոցառումները մեծապես գնահատվեցան Արևելքի ճնշված ազգաբնակչության կողմեն։ 1917-ին խաղաղության մասին Ռուսիո սովետներու II համագումարին կողմե որդեգրված հրամանագիրը ճշտեց սկզբունքային կեցվածքը սովետական իշխանության, որ կարտահայտվեր ազգային հողամասերու բռնի կցման և նվաճումին դեմ, կդատապարտեր մեծ ու ծավալապաշտ պետություններու կողմե փոքր ու տկար երկիրներու հողամասերը ուժի գործադրությամբ գրավելու և յուրացնելու քաղաքականությունը։ Ժողովրդային կոմիսարներու խորհուրդ կոչին խոսքերը՝ ուղղված «Ռուսիո և Արևելքի բոլոր աշխատավոր իսլամներուն», լսվեցան ամբողջ աշխարհի մեջ։ Դուք պետք է ձեր կյանքը կազմակերպեք ձեր հարմար դատած ձևերով, ասված էր կոչին

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 392։

2 «Правда», 22.X.1984.

3 «Մեր նշանաբանն է Հառաջ», 6. XI. 1960։

մեջ։ Սովետական երիտասարդ պետությունը հանդիսավոր կերպով հայտարարեց, թե սովետական արևելյան քաղաքականությունը բոլորովին հակոտնյա է իմպերիալիստական ուժերու արևելյան քաղաքականության, այն է՝ սովետական քաղաքականությունը կաշխատի բոլոր միջոցներով սատարել Արևելքի ժողովուրդներու քաղաքական ու տնտեսական անկախ զարգացման։

Լիբանանի բանվորական առաջին դասակարգային կազմակերպություններու ստեղծումին զուգահեռ և Լիբանանի կոմկուսի հիմնադրության նախօրյակին, պատմության մեջ առաջին անգամ ըլլալով, նորաստեղծ սովետական հանրապետությունը թիկունք կկանգներ Սուրիո և Լիբանանի ժողովուրդներու ազատագրական պայքարին։

1917-ի վաղորդայնին, երբ արաբական երկիրները ազատագրական կռիվ կմղեին գաղութարարներու տիրապետության դեմ, Հոկտեմբերյան հայրենիքը քաղաքական աղդու նեցուկ ընծայեց Եգիպտոսին՝ 1919-ին, Իրաքին՝ 1920-ին և Սուրիո՝ 1925-ին։

Հոկտեմբերյան հեղափոխության բարերար ազդեցությամբ 1924-ի հոկտեմբերի 24-ին խումբ մը հեղափոխականներ, արհամարհելով այդ շրջանին տիրող խավարը և օտար իմպերիալիստ իշխանությանց բռնատիրական հալածանքները, առաջնորդվեցան Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ճշմարիտ գաղափարներով, հենվեցան բանվոր դասակարգի, գյուղացիության և առաջադեմ մտավորականության վրա, պայքարի ելան հանուն Լիբանանի ազգային անկախության և ընկերային ազատագրության, հանուն մարդու շահագործման վերացման, հանուն սոցիալիզմի իրագործման Լիբանանեն ներս և հիմնեցին Լիբանանի կոմունիստ կուսակցությունը[4]։

Հոկտեմբերյան հեղափոխությունը իր բարերար ազդեցությամբ ներգործեց արաբական աշխարհին և հատկապես Լիբանանեն ներս ազգային և ընկերային առաջընթացին վրա, որուն շնորհիվ մարքսիզմ-լենինիզմի գաղափարները սկսան աստիճանաբար տարածվիլ, ստեղծվեցավ Լիբանանի կոմկուսը և նաև առաջանալ սկսան հակագաղութային շարժումները։

Լիբանանի բանվորական շարժման դասակարգային բնույթ կրող առաջին կայծերը սկսան ցայտել մեծ Հոկտեմբերեն անմիջապես հետո, 1919-ին՝ Ֆրանսական երկաթուղագծի մենաշնորհյալ ընկերությունեն ներս։ Ճիշտ այս շրջանին է, որ հիշյալ հաստատությունեն ներս կազմվեցան բանվորական առաջին խմբակցությունները։ Քիչ ժամանակ ետք՝ 1920-ին, անոնք գործադուլ հռչակեցին աշխատավարձի հավելումի պահանջով։ Ըստ ծագ Կոլանի և Իլիաս Պուեյրիի, այդ շրջանին բանթող աշխատավորներուն մոտ միասնության գաղափարը թեպետ տարրերային եղած է, սակայն, հակառակ այս իրողության, պայքարի իջած բանվորները հաջողած են աշխատավարձերը ավելացնելու խոստում մը խլել գործատերերեն։ Այդ խոստումը, սակայն, դրժվեցավ հետագային տերերուն կողմե, որոնք զայն չգործադրեցին, ինչ որ նոր պայքարի մղեց հուսախաբված բանվորներուն, որոնք պարտավորվեցան 1921-ին դարձյալ գործադուլի դիմել։ Բայց այս երկրորդ գործադուլը մասնակի բնույթ կրեց և ակնկալված արդյունքը չտվավ։ Ընդհակառակը, անհրաժեշտ միասնության և կորովի պակասի հետևանքով մեկ քանի աշքառու բանվորներ հեռացվեցան աշխատանքեն։ Անոնցմե մեկը եղավ Սելիմ Մուպարաքը[5]։

Ցնորությունը որոշակի կուգա հաստատելու, թե ինչպես լիբանանյան ենթահողին վրա կիրագործվի դատական մարքսիզմի ծանոթ դրությունը այն իմաստով, որ երբ Լիբանանեն ներս դրամատիրությունը սկսավ զարգանալ, անոր

4 «Կանչ», 2. XI. 1974։

5 جاك كولان، الحركة النقابية في لبنان، ١٩١٩—١٩٤٦، دار الفرابي، بيروت، ١٩٧٤، ص-٩٧. الياس بوايري، تاريخ الحركة العمالية و النقابية في لبنان، ١٩٠٨-١٩٤٦، الجزء الاول، بيروت، ١٩٨٠، ص، ٩٧١.

այս առաջընթացը սրեց ընկերային հակասությունները՝ կազմակերպելու և իր մարդկային տարրական իրավունքները պաշտպանելու մղեց տեղական բանվոր դասակարգին, որը վիճակի և կացության անհրաժեշտությունեն մեկնելով՝ առաջինը ինք եղավ արհեստակցական միության կազմողը։

Ֆրանսական գաղութարարները, տեսնելով Լիբանանի բանվորության և մյուս խավերի մեջ աճող ազատագրական և սոցիալիստական շարժումը, փորձեցին այն վերցնել իրենց ձեռքը և տանել բարենորոգչությունների ուղիով, արգելակելով անոր մեջ ազատագրական արմատական ձգտումները։ Այդ նենգավոր մտադրությունն իրագործելու համար ֆրանսական մանդատի իշխանությունները 1921-ին մայիս մեկին ստեղծեցին «Մեծն Լիբանանի բանվորներու ընդհանուր կուսակցությունը»։ Նշված կազմակերպությունը հիմնված էր 15 հունիս 1919 թ.՝ «բանվորական ընդհանուր դաշնակցության» անվան տակ։ Նկատելով, որ այս հնարածո «համադաշնակցության» գործունեությունը դիմակազերծված էր և այն ուներ լճացած վիճակ, անոր սանձերը իրենց ձեռքին պահողները ստեղծեցին «բանվորներու ընդհանուր կուսակցություն», որուն հիմնական ծրագրին մեջ հստակ դրված էր, թե կուսակցության նպատակն է բարելավել բանվորներու կյանքի մակարդակը, ստեղծելով սերտ գործակցություն գործատերերու և բանվորներու միջև, իսկ մյուս կողմե՝ ստեղծել նույնպիսի փոխհարաբերություն կուսակցության և իշխանության միջև, գործածել արաբական և ֆրանսական ղույդ լեզուները[6]։ Այս մասին Լիբանանի կոմկուսի ծրագրին մեջ նշված է. հոգատարությունը (մանտագը) ստեղծեց բարենորոգչական կուսակցություն մը՝ «բանվորներու ընդհանուր կուսակցությունը»[7]։ Ինչպես որ հարկ էր ակնկալել, այս կուսակցության ղեկավար կազմը կբաղկանար հինգ խոշոր հողատերերե, հինգ մեծահարուստ առևտրականներե, հինգ հրատարակչական հաստատություններու տերերե և փաստաբաններե ու բժիշկներե[8]։ Նշենք նաև, որ ղեկավարության այս կառույցը արդյունքն էր նաև կուսակցության ծրագրին մեջ տեղ գտած այն կանոնին, թե կուսակցության մեջ կրնան անդամակցիլ գործատերերն ու բանվորները, պայմանով որ պետք է 5 ոսկի անդամատուրք մուծեին ամիսը։ Իսկ եթե կուզեն իրենց թեկնածությունը գործադիր մարմնի ընտրություններուն ներկայացնել, պարտին 15 ոսկի վճարել[9]։ Ասիկա, անշուշտ, միջոց էր, որ կողմնակի ճամբով կուզվեր բանվորները հեռացնել կազմակերպության ղեկավարությենեն։ Փաստորեն բանվորները չկրցան մոտենալ պատասխանատու դիրքերու. իրենց համար դժվար էր այդ գումարը մուծել։

Սկզբնավորության գաղութարարները մեծ հույսեր դրած էին այս կուսակցության վրա։ Սակայն այդ հույսերը չարդարացան հակառակ այն իրողության, որ այդ շրջանին հիշյալ կուսակցության դեմ մրցակից որևէ ուժ չկար, ոչ ալ ընկերային կազմակերպություն։ Անոր կապերը շատ սահմանափակ էին բանվորական ընկերակցություններուն և կազմակերպություններուն հետ[10]։ Իր գործունեությամբ կուսակցությունը ընդհանրապես կլանված էր

---

[6] محمد دكروب، السنديانة الحمراء، بيروت، ١٩٧٤، ص ٢٠٠.

[7] Լիբանանի կոմկուսի երկրորդ համագումարին ծրագիրը (հայերեն պատճենը), Պեյրութ, 1968, էջ 59։

[8] محمد دكروب، السنديانة... نفسه، ص ٢٠١.

[9] ك. بحصلي، مساهمة في دراسة الطبقة العاملة في لبنان، باريس، ١٩٥٤، ص ٤٠٨—٤١٢.

«Բանվորական կուսակցությունը» 1925-ին կապ կհաստատեր հետևյալ 11 ընկերակցություններու. երկաթուղագծի, դերձակներու, սափրիչներու, ատաղձագործներու, հանրակառքի, խոհարարներու, հրաժիշտներու, շինարարներու, հյուսվածքեղենի, վարորդներու և կոշկակար բանվորներու ընկերակցություններու հետ։

[10] ابيس، وضع الشغيلة في سورية، الامية الحمراء، نيسان، ١٩٢٥، ص ٥١.

ընտրական աշխատանքներով։ Բանվորներու անունով կխոսեր սիրաշահելու համար զիրենք, սակայն չէր հաջողեր իր դիրքերը ամրացնել բանվորական զանգվածներեն ներս։

Այս կազմակերպությունը փաստորեն անխիղճ շահագործումի միջոց ըլլալով, բուռն բողոք առաջացուց բանվորներու մոտ։ Արդարև 1920-ական թվականներուն երկաթուղիի բանվորներու հուզումներն հանգեցան գործադուլի։ 1909—1919 թթ. կարելի է կոչել բանվորական շարժման արթնացման տարիներ, որովհետև այս ժամանակաշրջանին ստեղծվեցան բանվորական բազմաթիվ կազմակերպություններ. առաջին համագործակցական ընկերակցությունը հիմնադրվեցավ 1908-ին երկաթուղագծի բանվորներուն ու պաշտոնյաներուն կողմե։ Իսկ 1912-ին հիմնվեցավ ամերիկյան համալսարանի տպարանի բանվորներու և պաշտոնյաներու ընկերակցությունը, որմե ետք, 1914-ին, հիմնվեցավ Պեյրութի գրաշար բանվորներու ընկերակցությունը, որուն մաս կկազմեին գործատերերն ու բանվորները։ Նույն թվականին գրաշար բանվորներու ընկերակցությանը միացան նաև ամերիկյան համալսարանի տպարանի աշխատավորները, որով կազմվեցավ Պեյրութի ընդհանուր դրաշար-բանվորներու ընկերակցությունը[11]։

Հիշյալ ընկերակցություններուն գլխավոր նպատակն էր ստեղծել համագործակցություն բանվորներու և գործատերերու միջև, այսինքն՝ դասակարգերու միջև գործակցություն։ Այս ընկերակցությունները դասակարգային պայքարի բնույթե զուրկ ըլլալով հանդերձ, կհանդիսանային աշխատավորներու համախմբման, կազմակերպման կեդրոններ։

Այս ընկերակցությունները իրենց կազմության նախաքայլերուն մեջ էին, երբ բռնկեցավ համաշխարհային առաջին պատերազմը, որու հետևանքով և ստիպողաբար անդամալուծվեցան նորաստեղծ բանվորական կազմակերպություններու աշխատանքները։ Այս վիճակը տևեց մինչև պատերազմի վերջավորությունը։

1920-ական թվականներու Լիբանանի մեջ տեղի ունեցած բանվորական շարժումներուն համար իրավունք կունենանք ըսելու, որ անոնք դասակարգային որոշ գիտակցության մը նշույլներ կկազմեին։ Մեր տեսակետը հիմնավորող փաստ է նաև այն իրողությունը, որ այդ ժամանակահատվածի բանվորները կփորձեին շոշափել ու գործել պայքարի իրենց ուղիները, ստեղծել ինքնուրույն կուսակցություն։

Բանվորական այս շարժումներեն ներշնչվելով, կարգ մը առաջադեմ բանվորներ հասած էին այն համոզումին, թե բանվոր դասակարգը չի կրնար Լիբանանի կյանքեն ներս անկախ դեր մը ունենալ և պահանջներ իրագործել առանց որ ունենա իր ինքնուրույն քաղաքական կազմակերպությունը։ Մեկնելով այս սկզբունքեն՝ անոնք որոշեցին հիմնել բանվոր դասակարգի կուսակցություն մը, որ հենած ըլլա հեղափոխական գիտական սոցիալիզմի գաղափարախոսության վրա, որպեսզի կարենա ղեկավարել բանվորական զանգվածները, իրագործել անոնց պահանջները, պայքարիլ ի խնդիր երկրի սնկախության, ազատության, ազգային դեմոկրատական իշխանության և սոցիալիզմի[12]։ Լիբանանի կոմկուսի ծրագրին մեջ հիշյալ շրջանի համար կատարված է հետևյալ բնութագրումը. «Փորձառությունը ապացուցեց սենտիքայական բարեխորհրդական ձախողանքը, պայքարի օրինական մեթոդներուն ու ձևերուն անբավարարությունը բանվոր դասակարգի և իր դաշնակիցներու առջև դրված պայքարի առաքելությանց իրագործումի մարզին մեջ՝ ֆրանսական մոնոփոլներու, տեղական դրամատերերու և անոնց նեցուկ հանդիսացող հոգատար իշխանությանց դեմ։ Այս կացությունը կպահանջեր ստեղծումը... բանվոր դասակարգի և Լիբանանի աշխատավորական զանգվածներու հեղափոխական կուսակցությունը»[13]։

---

[11] الياس بوايرى، الحركة العمالية . . . ، ص. ٩٤.

[12] جاك كولان: الحركة النقابية . . . ، مصدر مذكور، ص ١١٧

[13] Լիբանանի կոմկուսի ծրագիրը, նույն տեղում, էջ 59—60։

1923-ին գրաշար բանվորները կվերակազմեին իրենց սենտիքան։ Այս կապակցությամբ Ժագ Կոլան կսե. «Ասոր կազմության մեջ դեր խաղացին կարգ մը գրաշար բանվորներ, անոնց մեջ կգտնվեին սենտիքալիստներ՝ Իպրահիմ Քանպարը, Հաննա Պաթրունին, Խալիլ Սարգիսը, Իլիաս Իթանին, Զաքարիա Խալիֆեն և ուրիշներ»[14]։ Նույն տարվա սեպտեմբերի 1-ին, խոհարարները առաջին անգամ ըլլալով, իրենց կազմակերպությունը կհիմնեն սենտիքայի անվան տակ[15]։ Այս սենտիքան կունենա նաև իր ներքին կանոնադրությունը։ Այս մասին Արիս Աջապահյան իր ձեռագիր հուշերուն մեջ մեզի կպատմե ըսելով, թե խոհարարներու սենտիքային ներքին կանոնադրությունը այդ ժամանակ արաբերենե հայերենի թարգմանված էր լիբանանահայ խոհարար Հակոբ անունով բանվորի մը կողմե։ Այս վկայությունը կհաստատե, թե հիշյալ սենտիքային կազմության աշխատանքներուն մաս կազմած են և անոր գործին մասնակցություն բերած են դեռ նոր Լիբանան հաստատված գաղթական հայեր[16]։ Լիբանանահայ բանվորներու մասին Հարություն Մատեյան կսե. «Հայ բանվորը հայ ազգի շատ էական ուժերեն մեկն է։ Առանց հայ բանվորի բարձրացման հայ ազգի բարձրացումն ու բարգավաճումը կարելի չէ։ Ինչպես արաբ, նույնպես հայ պրոլետարի բարելավման պետք է օգնե անոնց, տալով արհմիութենական ազատություններ, աշխատանքի երկար ժամերը կրճատող, օրավարձի նվազագույն չափ մը որոշող, աշխատավորի արկածի, հիվանդության, անգործության աշխատանքի քմահաճ վտարման և օտար ընկերություններու սարսափի ռեժիմին դեմ պաշտպանող օրենքներ և այլն»[17]։

Խիստ ուշագրավ է այն պարագան, որ այդ ժամանակաշրջանի բանվորական ու սենտիքայական շարժման զարթոնքը կզուգադիպեր երկրեն ներս սոցիալիստական գաղափարներու տարածման ու առաջին կոմունիստներու երևան գալուն հետ։ Այս իրադարձության առաջին հետևանքներեն մեկը եղավ այն, որ 1924-ի ամռան Պիքֆայայի մեջ հիմնվեցավ ծխախոտագործական ֆաբրիկներու մեջ աշխատող բանվորներու դասակարգային հիման վրա կազմըված առաջին սենտիքան[18], որ կոչվեցավ «Լիբանանի ծխախոտագործական բանվորներու սենտիքա»[19]։

1924-ի ամռան Ֆուատ Շիմալին իր հետ աշխատող տասը բանվորներու հետ շփումներ հաստատելեն ետքը կհամոզե զանոնք սենտիքա կազմելու։ Այս նպատակով դիմում կներկայացնեն ֆրանսական իշխանություններուն, որոնք արտոնության հարցը կպայմանավորեն Ֆուատ Շիմալիին դուրս ձըգվելով հիմնադիր մարմինեն։ Լիբանանի ծխախոտի բանվորները արհմիություն կազմելու արտոնություն ստանալեն ետքը. ամեն գնով կաշխատին պահպանել նորաստեղծ միության անկախությունը, այսինքն՝ չենթարկվիլ գաղութարարներու կողմե կազմված «բանվորական» կուսակցության և կըսկըսին տարածվիլ Պիքֆայայեն դուրս։ Մասնաճյուղեր կհաստատեն Տհուր Շուեյրի, Խանշարայի, Թղրինի և Շիահի մեջ։

Պատմականորեն ծխախոտի բանվորներու դասակարգային այս առաջին սենտիքան արգասիքը եղավ երկու վճռորոշիչ երևույթներու։ Առաջին, բանվոր դասակարգի մոտ արթնցող գիտակցության, երկրորդ Ֆուատ Շիմալիին բերած սենտիքայական ու կուսակցական փորձառության և անոր գործադրու-

---

14 جاك كولان، الحركة النقابية . . . نفسه، ص١١٧.

15 ج. شادر، النقابة و الديمقراطية، محاولة في ، التاريخ الاجتماعي اللبناني ١٩٠٩—١٩٥٤، بيروت، ١٩٥٤، ص٥٦.

16 Արիս Աջապահյան, Սենտիքալիստի մը հուշերը (ձեռագիր), Ա մաս, էջ 44։

17 Հարություն Մատեյան, Հայ ազգի միության և բարգավաճման համար, զեկույց՝ կարդացված Լիբանանի կոմունիստ կուսակցության հայկական հատվածի Պյուրոյի Պեյրութ գումարած ընդլայնված նիստին մեջ, 2 սեպտեմբերի, 1937, էջ 10—11։

18 Ali Chami, Evolution De la Classe Ouvriere Dans le Capitalisme Libanais Contemporain, Grenoble, 1978, p. 309.

19 Նույն տեղում։

թյան Լիբանանի բանվորական շարժումին ներս։ Այդ փորձառությունը հիմք դարձավ Պիքֆայայի ծխախոտագործական ֆաբրիքներու շարք մը բանվորներու հետագա գործունեության։ Ասոնք հանդիսացան ոչ միայն դասակարգային առաջին սենտիքայի հիմնադիրներ, այլև հակադրվեցան «բանվորական» կուսակցության որդեգրած ուղղության, կորիզը հանդիսացան Լիբանանի կոմունիստ կուսակցության ստեղծումին։

Բանվորական շարժման աշխուժացումին ներշնչվելով, կարգ մը բանվորներ հասան այն համոզումին, թե բանվոր դասակարգը չի կրնար Լիբանանի կյանքին ներս անկախ դեր մը ունենալ և պահանջներ իրագործել առանց որ ունենա իր քաղաքական կազմակերպությունը։ Մեկնելով այս սկզբունքեն, անոնք որոշեցին հիմնել բանվոր դասակարգի կուսակցություն մը, որ հենած ըլլա հեղափոխական գիտական սոցիալիզմի գաղափարախոսության վրա, որպեսզի կարենա ղեկավարել բանվորական զանգվածները և իրագործել անոնց պահանջները և պայքարիլ ի խնդիր երկրի անկախության, ազատության և ազգային դեմոկրատական իշխանության ու սոցիալիզմի։ 24 հոկտեմբեր 1924 թ. Յուսեֆ Իպրահիմ Յազպեքը Պեյրութի արվարձաններեն Հատեթ գյուղի իր տան մոտերը գտնվող տան մը մեջ ժողովի հրավիրեց մոտ 20 հոգի, որոնց մեջ կգտնվեին փաստաբաններ, ինժեներներ, լրագրողներ, պաշտոնյաներ, նաև երկու բանվորներ՝ Ֆուատ Շիմալին ու պաղեստինցի երիտասարդ մը, որ դաշխատեր երկաթուղագծի ընկերության մեջ[20]։ Ասոր հաջորդեց երկրորդ հանդիպում մըն ալ, որ տեղի ունեցավ Պիքֆայայի մեջ՝ ներկայությամբ 10 բանվորներու և մասնավորապես Յուսեֆ Յազպեքի։ Երրորդ ժողով մըն ալ, դարձյալ Հատեթի մեջ, տեղի ունեցավ նախորդեն քանի մը օր ետքը[21]։

Վերոհիշյալ հանդիպումներու ընթացքին որոշեցին հիմնել նոր կուսակցություն մը՝ «Լիբանանի ժողովուրդի կուսակցություն» անունով։ Յուսեֆ Յազպեքը ընտրեցին կուսակցության քարտուղար[22]։ Կուսակցության հիմնադիր կորիզը կազմողներուն մեծ մասը կբաղկանային բանվորներեն։ Անոր կանդամակցեին Յուսեֆ Իպրահիմ Յազպեք, Ֆուատ Շիմալի, Ֆերիտ Թաամն, Էլիաս Քաշաամի և Պուտրոս Հաշեյմի[23]։ Այս մասին Հ. Թոփուզյան կգրե. «Սիրիայի և Լիբանանի տղաբական առաջին կոմունիստական խմբակը, որն ընդգրկում էր հինգ մարդ՝ Ֆուատ Շիմալին, Յուսեֆ Յազպեքը, Ֆարիտ Տահմեն, Էլիաս Քաշաամին և Պուտրոս Հաշեյմին, կազմվել է 1924 թ. հոկտեմբեր 27-ին (24-ին—Պ. Թ.), Բեյրութում։ Այդ խմբակի նախաձեռնությամբ ստեղծվեց «Լիբանանի ժողովրդական կուսակցությունը»[24]։ Կոմունիստական այս խմբակին ստեղծումը կարևոր անկյունադարձ կհանդիսանա բանվոր դասակարգի և աշխատավորական զանգվածներու կյանքին և պայքարին մեջ։ Բանվոր դասակարգը և ժողովրդային առաջադեմ զանգվածները Լիբանանի մեջ, առաջին անգամ ըլլալով, ունեցան առաջապահ քաղաքական ղեկավարություն մը, որ կկռթներ գիտական գաղափարաբանության, այսինքն մարքսիզմ-լենինիզմի հիմքերու վրա։

«1924-ին կոմունիստ կուսակցության ստեղծումը պատմական անհրաժեշտություն մըն էր՝ տեր կանգնելու համար աշխատավորներուն շահերուն և պայքարելու ընչազուրկ կամ շահագործվող զանգվածներու քաղաքական և ընկերային ազատագրության համար, քանի որ այս կուսակցությունը և միայն ինք ընդունակ էր աշխատավորներու շարքերեն ներս գիտական սոցիալիզմի վերափոխիչ ու փրկարար գաղափարները տարածելու, նաև աշխատավորությունը կազմակերպելու և դեպի սոցիալիզմ առաջնորդելու»[25]։

---

[20] خالد كولان، الحركة . . . نفسه، ص ١١٧.

[21] Նույն տեղում։

[22] Նույն տեղում։

[23] جاك كولان، الحركة . . . نفسه، ص ١١٨.

[24] Հ. Թ. Թոփուզյան, Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին, Երևան, 1968, էջ 29—30։

[25] Լիբանանի կոմկուսի ծրագիրը, նույն տեղում, էջ 60։

Ժողովուրդի կուսակցությունը կարճ ժամանակի ընթացքին կազմեց իր խմբակները հատկապես այն շրջաններուն մեջ, ուր կային ծխախոտի բանվորներու սենտիքալական քիչ թե շատ հոծ կեդրոններ։ Այդ կեդրոններն ունեին իրենց ղեկավարները Պիքֆայայի շրջանի մեջ՝ Պուլոս Միհրի Մուշանթեֆը, Զահլեհինը՝ Ասատ Մունզերը, Շիահինը՝ Պուլոս Ճապպուր Մունզերը։ Իսկ Պեյրութի կազմակերպության անդամներուն մեծ մասը կբաղկանային մտավորականներե, որոնց քարտուղարն էր Էտիպ Մունզերը[26]։

Կուսակցության արագ աճը և անոր ազդեցության զորացումը արդյունքն էր այդ շրջանին ստեղծված առարկայական նոր պայմաններուն։ Այս կապակցությամբ Լիբանանի կոմկուսի Կեդրոնական կոմիտեն կուսակցության 50-ամյակին առիթով հրատարակած կոչին մեջ կկատարե հետևյալ ընութագրումը. «Լիբանանի կոմունիստ կուսակցության ծնունդը 24 հոկտեմբեր 1924-ին արդյունքն էր ոչ թե անձնական ցանկության կամ խմբավորումի մը շահերու թելադրանքին, այլ առարկայական անհրաժեշտության մը՝ բխած երկրի մեջ դրսևորվող նոր պայմաններեն»[27]։

Դասակարգային առաջին սենտիքային ու ժողովուրդի կուսակցության կազմութենեն հետո Լիբանանի բանվորական ու սենտիքալական շարժումը կազմակերպչական գետնի վրա նոր վերելք արձանագրեց։ Բանվորական շարժումը, առաջին անգամ ըլլալով, 1925-ին մայիսի մեկին առթիվ կազմակերպված միթինկին ներկայացավ պահանջային ծրագրով մը։ Ի հակադրություն «բանվորական» կուսակցության, կոմունիստ կուսակցությունը ժողովուրդի կուսակցության անվան տակ իսկական բեկում առաջացուց բանվորական շարժման մղած զանազան պայքարներեն ներս՝ տնտեսական, սենտիքալական, քաղաքական և ազգային գետնի վրա։

Կուսակցությունը սկսավ մեծ ջանքեր ի գործ դնել, որպեսզի աճի բանվոր դասակարգի ազդեցությունն ու հեղինակությունը երկրի հասարակական կյանքի բոլոր մարզերեն ներս։ Այս մեկը կուդա վկայելու պարզ ու որոշակի, որ Լիբանանի կոմկուսը, իր հիմնադրության առաջին մեկ օրեն, ղեկավար և ուղեցույցի դեր սկսավ կատարել Լիբանանի բանվորական ու սենտիքալական շարժումեն ներս, սատարելով անոր կազմավորման և զարգացման։ Ասոր պերճախոս ապացույցը կհանդիսանա իր նախաձեռնությամբ կատարված բանվորական հրապարակային առաջին օրինակելի ելույթը։ 1925-ի մայիսի մեկին Լիբանանի ժողովուրդի կուսակցության գլխավորությամբ Պեյրութի մեջ տեղի ունեցավ Սուրիո և Լիբանանի պատմության մեջ առաջին զանգվածային և դասակարգային բնույթի ելույթը։ Մայիս մեկի վաղ առավոտուն, գյուղական շրջանակներու բանվորական կեդրոնները շրջելե ետք, ժողովուրդի կուսակցության գործադիր կոմիտեն[28], մեծ թիվով բանվորներու ընկերակցությամբ կարմիր դրոշներով զարդարված ինքնաշարժերով եկավ Պեյրութի կուսակցության կեդրոնը, որ կգտնվեր Սայֆի թաղը։ Կեդրոնատեղիին պատուհաններն ու մուտքը զարդարված էին դրոշներով։ Կուսակցության կեդրոնատեղիին առջևեն ցուցարար ամբոխը քալեց դեպի սինեմա Քրիսթալ, ուր տեղի պիտի ունենար մայիսմեկյան անդրանիկ միթինկը։ Ճիշտ այդ պահուն ցուցարարներուն միացան խումբ մը հայ բանվորներ և ուսանողներ, որոնք անդամներ ու կողմնակիցներ էին կոմունիստական «Սպարտակ» երիտասարդական կազմակերպության[29]։ Արաբ և հայ բանվորներեն կազմված այս ցույցը, անցնելով մայրաքաղաքի կեդրոնական հրապարակեն, կուղղվի դեպի սինեմա Քրիսթալի սրահը։

---

[26] فؤاد الشمالي، نقابات العامل . . . نفسه، ص٤٥.

[27] «Կանչ», 25. V. 1974։

[28] 1925-ի ապրիլին ժողովուրդի կուսակցության գործադիր մարմնի անդամները կհաշվեին 17 հոգի։ Մեծամասնությունը ծխախոտի բանվորներ էին՝ հատկապես Պիքֆայայի շրջանեն։

[29] Կոմունիստական «Սպարտակ» երիտասարդական կազմակերպությունը հիմնված է 1923-ի վերջավորության։ Նախապես այս խմբակը կհարեր Հնչակյան ուսանողական միությանն։ «Սպարտակի» հիմնադիրն է Հարություն Մատեյան և պատասխանատու աշխատողներու շար-

Ներկաներուն թիվը ավելի քան 500 հոգի եղած է[30]։ Մայիսմեկյան հրապարակային անդրանիկ այս տոնակատարության ընթացքին ելույթ ունեցան էտիպ Մունդերը՝ որպես Պեյրութի շրջանի կազմակերպության քարտուղար, Յուսեֆ Յազպեքը և Ֆուատ Շիմալին, լիպերալ գրողներեն՝ Խայրալլահ Աթալլան, Շուքրի Պախխաշը և Հաննա Ապի Ռաշիտը, որ «բանվորական» կուսակցությունեն անջատվողներեն եղած է։ Ժողովրդային բանահյուսություն մը արտասանեց Իլիաս Ապու Շապաքեն՝ «Բանվորը կընթանա» խորագրով։ Ֆուատ Շիմալիին ելույթը եղավ դասակարգային դաստիարակիչ, կողմնորոշող և խանդավառիչ ճառ մը։ Միթինկի վերջավորության կարդացվեցավ 7 կետերե բաղկացած բանվորական պահանջային ծրագիր մը[31]։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ նման պահանջներ, առաջին անգամ ըլլալով, կբանաձևվեին հրապարակավ, աշխատավորական միթինկի մը ընթացքին, ուր մասնակից բանվորներեն շատեր կլսեին նման պահանջներու շուրջ։ Պահանջային ծրագիրը կբովանդակեր հետևյալ կետերը. ութը ժամով աշխատանք, միջին աշխատավարձ, որ բավարարե բանվորին ապրուստը, բանվորին իրավունքը պաշտպանող օրենսդրություն, երեխաներու կրթություն, ծերության պարագային կյանքի ապահովություն և աշխատանքային արկածներե անկարող դարձած բանվորներու ապրուստի հոգատարությունը գործատիրոջ կողմե, արգիլել գիշերային աշխատանքը, կազմել հանձնախումբ մը աշխատավարձերու վերաբերյալ օրենքի մը մշակումին համար, պատրաստել տնտեսական ծրագիրներ[32]։ Միթինկեն հետո նույն օրը կեսօրե ետք յոթ հոգինոց պատվիրակություն մը, որ լիազորված էր միթինկին մասնակիցներուն կողմե, սույն պահանջագիրը ներկայացուց ֆրանսացի կառավարիչին։ Կառավարիչը հարկադրվեցավ հավաստի տալ ութ ժամով աշխատանքային դրություն հաստատելու մասին և տրամադրություն հայտնեց աշխատանքի օրենսդրություն մշակելու նպատակով կազմվելիք հանձնախումբին մեջ բանվորական ներկայացուցիչներ ընդունելու[33]։

Մեր կարծիքով, գաղութատիրական նման պայմաններու տակ այս տարողությամբ կազմակերպչական աշխատանք ու պայքար ծավալելով քաղաքական, ընկերային և դաստիարակչական ակնհայտ հաջողություններու հասած ըլլալու. փաստն ինքնին վկայություն է, որ աշխատավորական պահանջներու առաջադրումը լիբանանյան շրջագիծեն ներս եղած է տրամաբանական ու պատեհ, իսկ պայքարի ձևը՝ ճիշտ և համոզիչ, որով կարելի եղած է աշխատավորական հոծ համախմբում գոյացնել բանաձևված պահանջներուն շուրջ։ Այս պարագան ցույց կուտա, թե աշխատավոր զանգվածները յուրացուցած են հիշյալ պահանջները և ներգրավված պայքարի մեջ՝ ի խնդիր այդ պահանջներու իրագործման։ Ավելին, կուզենք շեշտել, որ ամենեն դրական և էական տարրը մայիսմեկյան այս տոնակատարության մեջ կկայանա հոն, ուր առաջադրված այդ պահանջները կկազմեն հեղափոխական պայքարի հաջող ձև ու

ին կային Ավետիս Դնդունին, Միքայել Անանիկյանը, Պետրոս Պարտիզպանյանը, Ոսկան Հովհաննեսյանը, Խաչիկ Փափազյանը, Արամ Երեցյանը, Իսկենտեր Կերյանը, Ավետիս Կեռչերյանը, Շավարշ Միհրանյանը, Հայկազուն Պոյաճյանը, Մասիս Փանոսյանը, Սեդրակ Հայկազյանը, Ստեփան Դաֆաֆյանը, Փանոս Արամայիսյանը, Հակոբ Տեր-Պետրոսյանը և ուրիշներ (վերոհիշյալ անուններու ճշգրտության համար առանձին հանդիպում ունեցանք Հարություն Մատեյանին հետ)։

30 *Միթինկի մասնակիցներուն թվաքանակի մասին ժագ Կոլան տեսակցություն ունեցած է Յոսեֆ Իպրահիմ Յազպեքի և Հարություն Մատեյանի հետ, որոնք հաստատած են վերոհիշյալ թիվի ճշգրտությունը։*

31 يوسف ابراهيم يزبك، حكاية اول ايار في العالم و في لبنان
دار الفرابي، بيروت، ١٩٧٤، ص.ص. ٨٤—٨٥.

32 جريدة النسانية، العدد الاول، ١٥ ايار ١٩٢٥، ص ٧

33 جريدة الانسانية . . . نفسه.

թաքթիկ՝ բանվորական և սենտիքայական շարժումը դեպի օրինականության (լեկալիթե) մղելու տեսակետին։

Պայքարի ու գործելակերպի այս ճիշտ տակտիկան իր դրական արձագանքը գտավ այդ ժամանակվա տեղական մամուլին մեջ։ Հիշատակենք կարգ մը թերթեր, կատարելով անոնցմե մեջբերումներ։

«Ալ-Ահրար» թերթը 1925-ին մայիսի 2-ի թիվին մեջ գրած է. «Լիբանանի բանվորները, առաջին անգամ ըլլալով, մասնակցեցան միջազգային այս շարժումին, նշելով մայիսի մեկը։ Անոնք որոշեցին չաշխատել այդ օրը և ցույցերուն մասնակցելով տողանցեցին փողոցներու մեջ[34]»։ «Ալ-Պարք» օրաթերթը նույն թվականին գրած է. «Արաբական երկիրներու մեջ Լիբանանը եղավ առաջինը, որ հրապարակային հանդիսությամբ նշեց մայիսմեկյան տոնակատարությունը»[35]։ «Զահրե Ֆեթաթ» օրաթերթը մայիսի 2-ին թիվին մեջ գրած է. «Սինեմա Քրիսթալի մայիսմեկյան միթինկը աննախընթաց էր որպես զանգվածային ներկայություն, ելույթներուն խորքը, ճառախոսներու կողմե արտահայտված քաջարի և պայքարի ոգի՝ ի խնդիր վերափոխություններու և բանվորական իրավունքներու պաշտպանության»[36]։

Լիբանանի նորաստեղծ կոմունիստ կուսակցությունը, այսպիսով, տակավին իր հիմնադրության մեկ տարին չբոլորած, կկազմակերպեր Լիբանանի մեջ առաջին մայիսմեկյան միթինկը, որուն կմասնակցեին նաև գաղթականության ցուպը հաղիվ մեկդի դրած հայ կոմունիստները[37]։

1925-ի մայիսմեկյան միթինկը, բացի հիշյալ դրական տվյալներեն, այլ նշանակություն մըն ալ ունեցավ։ Ան առիթ եղավ արաբ և հայ բանվորներու միջև գործակցության և միասնական պայքարի, խթան հանդիսացավ արաբ և հայ կոմունիստներու միավորման։ Այսպես, միթինկեն անմիջապես հետո կայացած խորհրդակցություններու ընթացքին որոշվեցավ Սուրիո և Լիբանանի արաբական և հայկական բոլոր կազմակերպությունները միացնել[38]։ Այս միավորումեն ետք կայացան ուրիշ խորհրդակցություններ, որուն ընթացքին կազմվեցավ Կեդրոնական կոմիտե, որ կոչված է Սուրիո և Լիբանանի կոմկուսի Կեդրոնական կոմիտե։ Ասիկա կհանդիսանա Սուրիո և Լիբանանի կոմկուսի առաջին Կեդրոնական կոմիտեն։ Անոր կազմին մեջ կային Ֆուատ Շիմալին, Հարություն Մատեյան, Յուսեֆ Յազպեքը, Հայկազուն Պոյաճյան և Ֆեոդոր Թաամեն[39]։ Կոմկուսի հիսնամյակին տոնիթով կուսակցության հիմնադիրներեն Յուսեֆ Յազպեք իր ելույթի մեջ ըսավ. «Եթե մենք չհիմնեինք կոմունիստ կուսակցությունը՝ ուրիշներ պիտի ընեին այդ անպայման։ Վեց հոգի էինք, մեր կուսակցությունը հիմնելու ատեն։ Այսօր այդ վեցը դարձած են տասնյակ հազարներ»[40]։

Լիբանանի կոմունիստ կուսակցության ստեղծման այս նախաձեռնությունեն հետո կազմվեցավ սենտիքաներու կազմակերպչական կոմիտե մը (25 սեպտեմբեր 1925-ին)[41]։ Այս կոմիտեն համաձրելով իր գործունեությունը Լիբանանի կոմկուսին հետ, Լիբանանի բանվորական ու սենտիքայական շարժումը

---

34 يوسف خطار الحلو، من تاريخ اول نواة في لبنان، النداء، العدد ٢ ايار ١٩٨٢.

35 Նույն տեղում։

36 Նույն տեղում։

37 «Կանչ», 15. X. 1974։

38 Հարություն Մատեյանին հետ մեր տեսակցության ընթացքին ան պատմեց, թե ինչպես մայիսմեկյան միթինկին հաջորդ օրն իսկ կոմունիստական «Սպարտակ» կազմակերպությունը ժողով մը գումարած է և միաձայնությամբ որոշած է միանալ արաբ կոմունիստներուն։

39 «Կանչ», 3. VII. 1982։

40 Նույն տեղում, 2. XI. 1974։

41 Այս կոմիտեին կազմը կբաղկանար ատաղձագործներեն՝ Պերժիս Ապու Սալհը, սափրիչներեն՝ Ճորճ Այյանը, գրաշարներեն՝ Զահրան Ղարիպը, խոհարարներեն՝ Նեսիմ Շիմալին, ծխախոտի բանվորներեն՝ Ֆուատ Շիմալին և հայ մը, որուն անունը ձեռք չկրցանք ձգել։

մղեց նորանոր ուղիներ, հակառակ ֆրանսական գաղութարարներուն կողմէ ձեռնարկված ճնշումին, սարսափին, հալածանքին ու ձերբակալություններուն։ Ահա այսպես է, որ նորակազմ Լիբանանի բանվորական ու սենտիքալական շարժումը, ղեկավարությամբ Լիբանանի կոմունիստ կուսակցության, հասակ առավ՝ դիմակայելով բոլոր դժվարություններն ու արգելքները։

ИЗ ИСТОРИИ РАБОЧЕГО И КОММУНИСТИЧЕСКОГО ДВИЖЕНИЯ В ЛИВАНЕ (первая половина 1920-ых годов)

ПОГОС ТУТУНДЖЯН (Ливан)

Резюме

Как во всех странах Ближнего Востока, так и в Ливане рабочее и коммунистическое движение возникло и развилось под непосредственным влиянием великих идей, провозглашенных Октябрьской революцией. Важным событием в истории рабочего класса Ливана стало создание Ливанской коммунистической партии, явившееся исторической необходимостью и свидетельствовавшее о подъеме классового самосознания рабочего класса. Под ее руководством 1 мая 1925 г. в Бейруте имело место первое массовое выступление рабочих, на котором рабочий класс выдвинул свои требования, состоящие из семи пунктов.